

## ՆՃՆՆՆՈՐ ՎՆՔԵՐ.

Շ Ա Ղ Ա Տ.

Եղել է առաջ գահանիստ քաղաքաւան, բայց այժմ մի հասարակ գիւղ է և գտնուում է մի թերակղզիաձև հարթութեան վրայ: Նրա հիւսիսային կողմից հոսում է Բագար-չայը, որի հետ խառնուելով արևմտահիւսիսից հոսող վտակը՝ անցնում է դէպի արևելք, մինչև Բերդի սարը, ուր նրա հետ խառնուում է Մազրա-գետը: Գիւղի արևելեան կողմում բարձրանում են երկու բլուր, ուր հնում մի բերդ է եղել, որի հետքերը միայն կարելի է այժմ նշմարել: Փոքր ինչ հեռու, հիւսիսային կողմում երևում է Քեչարբերդի սարը, որի վրայ նույնպէս հնումը եղել է մի բերդ, որ այժմ բոլորովին քանդուած է: Իսկ հարաւային կողմում բարձրանում է «Ճգնաւորի սարը»: Սրա գագաթին, մօտ 30 մետր երկարութեան և 12 մետր բարձրութեան մի ժայռ կայ, բաղկացած 1-4 մետր երկարութեան և զրեթէ մի մետր լայնութեան կանոնաւոր, միմեանց մօտ դարսած քարերից, որոնք աստիճանաբար բարձրանալով՝ մի գեղեցիկ պրիզմա են կազմում: Այս ժայռի մէջ մի փոքրիկ անցք կայ, որ 2,88 մ. (4 ա.) խորութիւն ունի, սակայն շատ նեղ է, այնպէս որ միայն տասն տարեկան երեխան կարողացաւ ներս մտնել:

Այս ժայռը երկար ժամանակ պաշտուում էր. հէնց այժմ էլ երաշտ ժամանակ Շաղատի և շրջակայ գիւղերի բնակիչները այստեղ են գիմում ուխտ անելու, զոհեր մատուցանելու մի փոքրիկ մատուռի մէջ, որ սրանից տասն տարի առաջ շաղատեցիները շինել են այս լեռան լանջին: Այստեղ մի տափարակ և մի գմբէթաձև փոքրիկ քար կայ: Պեղումները ցոյց են տուել, որ այդ սուրբ համարուած տեղում բացի կճուճների կտորներից ուրիշ ոչինչ չէ եղել:

Այս ժալոսի մօտ կայ մի ուրիշ նոյնպիսի ժալոս, իսկ սրանց մէջ նկատուում են պարսպի հետքեր:

Գիւղի արևմտեան կողմում, բլրակների մէջ մի փոս կայ, ուր երբեմն լին է եղել: Այժմ գարնան ժամանակ միայն լըցւում է նա և ջուրը մի առժամանակ մնում:

Գիւղի գրեթէ կենդրոնում կայ մի փոքրիկ, հասարակ ցեխից շինուած մատուռ, որ ըստ ոմանց ս. Ստեփանոս, ըստ այլոց ս. Դանիէլ է կոչուում: Սրա մէջ կայ երկու գերեզման, առանց տապանագրի:

Մատուռի շուրջը կան հին գերեզմաններ, որոնցից մինի վրայ կարգացոււմ է, թվ. 28: Ննջեցեալի անունը եղծուած է, միայն կարգացոււմ է «բէկ» խօսքը:

Մատուռից փոքր ինչ հեռու կանգնած է գիւղական եկեղեցին, որը կառուցել են գիւղացիները՝ նախկին եկեղեցու տեղում: Կոչուում է սուրբ Գէորգ: Երկու, պատերին կից կեղծ-սիւների վրայ բոլորում են ռոմանական կամարներ և նոյնպիսի ձեղուն: Չորս սաստիկ փոքրիկ լուսամուտներազօտ լուս են սփռում: Եկեղեցին ներսից բաւական զարգարուած է. ունի գեղեցիկ խաչկալ, երկու ջահ: Յատակը ծածկուած է գորգերով:

Եկեղեցու շուրջը կան հին գերեզմանաքարեր:

Փողոցները փոքր ի շատէ կանոնաւոր են: Տների առաջ կան փոքրիկ պարտէզներ, ուռի ծառերով:

Բնակիչները 1829 թուին Պարսկաստանի Մարազայից, Խոյից և Սալմաստից գաղթած հայ լուսաւորչականներ են, ընդամենը 126 տուն, 667 ար. 550 իգ., միասին 1217 հոգի:

Պարսպում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ուսումնարան չունին: Գիւղում կլինին մօտ 25 գրագէտ: Եաղաթի մօտ է Բալաքը, ուր ոչ մի հնութիւն չկայ: Բնակիչները Սպահանից ու Սալմաստից են գաղթած:

### ՂԱՐԱՔԻԼԻՍԱ.

Համանուն գիւղի արևմտահիւսիսային կողմում, մի բարձրութեան վրայ կանգնած է Ս. Յովհաննէս եկեղեցին: Սա

սև, տաշած քարից շինուած մի զեղեցիկ շէնք է, 19,17 մետր (9 սաժէն) երկարութեան, 14,91 մ. (7 ս.) լայնութեան և 19,17 մետր (9 ս.) բարձրութեան, չհաշուած գմբէթը, որ քանդուած է: Իւրաքանչիւր պատի մէջ կան երկուական եռանկիւնաձև ներսանկուածներ, իսկ պատուհանների գլխներին զեղեցիկ նախշեր: Եկեղեցին ներքուստ խաչաձև է և անսիւն: Չորս կիսաբոլոր, չորսական մետր լայնութեան թևեր բաժանուած են եկեղեցին չորս մասի, որոնց անկիւններում կան խորհրդանոց՝ իւրաքանչիւրը մի պատուհանով: Կամարները, որ բոլորում են թևերի պատերին կից կեղծ սիւների վրայ՝ ռոմանական են, իսկ սրանց վրայ բարձրանում է կաթուղիկէն, 7,2 մ. (3 ս. և 1 ա.) բարձրութեան, որ ունի չորս պատուհան: Գմբէթը քանդուած է:

Կաթուղիկէի մէջ կան երեք բարձրաքանդակ անդրիններ, որոնցից միջինը փոքր ինչ աւելի մեծ է: Սրա շուրջը գլորուած է.—

*Տէր Յովսէփ Սիմեաց եպիսկոպոս.*

*Իսկ միւսների վրայ՝—*

*Թէոդորոս Սիոնի վ.անական.*

*Կոնազատ Սիմեաց տէր:*

*Կաթուղիկէի շուրջը՝ արտաքուստ փորագրուած է.—*

*Շնորոյեանի Բարննի (?) Մամիկոնեան.*

Կաթուղիկէի վերին քիւի (corniche) վրայ շինուած են չորս աւետարանիչների անդրինները, իւրաքանչիւրի տակ անունը փորագրուած:

*Իսկ ներքին քիւի վրայ արձանագրուած է.*

*Սուրբ Գրիգոր ողորմեա Գրիգորի Սիմոյ և կորոսեայ Ռոստոմոյ:*

Եկեղեցին ունի երկու զուռ, արևմտեան և հարաւային կողմերում, որոնց վերևում կան մի մի մեծ պատուհան:

Արևմտեան դռան մօտ կայ մի արեգակնային ժամացոյց և սրա մօտ հետևեալ արձանագրութիւնները.—

*Թվ. ԾԿԶ. Մմբատ որդի Աշոտոյ Սիմեաց  
իշխանաց իշխան. Յաղաթս յիշեցէք:*

✠ *Զգրող ժամացոյցիս յիշեցէք. Նս Գրիգոր  
գրեցի:*

Սկեզեցու մէջ, սեղանի աջ պատի վրայ, կայ հետևեալ  
նդժուած արձանագրութիւնը:

*Նս Շապու զարդայ պատրիկայ որդի... ի  
վանից սուրբ Եկեղեցու գնեցի սնրտիլ վարդար  
(?) քառասուն նրկորդ շարաթի հինգշարթի ա-  
տուր, որ խափանէ իմ մեղացն...*

Սեղանի ձախ կողմում՝

*Եղիշա՛ Քս Ած վարագորդի Սիւնեաց հազա-  
րասւնտ:*

Սկեզեցին այժմ վերանորոգում են գիւղացիները, որով-  
հետև իրենց միակ աղօթատեղին է,

Ներքուստ բոլորովին զուրկ է որևէ գարգարանքից:

Գիւղը գտնուում է Բաղար-չայ գետի ձախ ափին: Հայ-  
կական թաղը գետեղուած է գլխաւորապէս գետի ափին, իսկ  
թրքականը՝ փոքր ինչ վերև մի բարձրաւանդակի վրայ:  
Գետի ափին և մանաւանդ գիւղի հարաւային կողմում կան  
գլխաւորապէս ուռնիներ, որ բաւական գեղեցիկութիւն են  
տալիս գիւղին: Կանոնաւոր փողոցներ չկան, աները քարա-  
շէն են, իրենց առանձին, պարսպապատ բակերով: Կան նաև  
վեց կանոնաւոր, եւրոպական ճաշակով շինուած և զարգա-  
րուած տներ: Գիւղի կենդրոնում գտնուում է արքունական  
միդասեան գաղտըր, որ բացուած է 1882 թուին. ունի եր-  
կու ուսուցիչ և 70 աշակերտ և մի քանի աշակերտուհի:

Բնակիչները 1829 թ. գաղթած են Խոյից և Սալմաս-  
տից. կան նաև հինգ տուն բնիկներ, որոնք այժմ 36 տուն  
են գտնել: Ընդամենը 185 տուն, 630 ար. 638 իգ. ի միա-  
սին 1268 հոգի:

Գիւղը պատկանում է Տաթևի վանքին:

ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ.

Սիսիանի հովտում, Հորթեկիւզ թրքաբնակ գիւղի մօտ,  
Ղարաքիլիսա-դաղ կոչուող լեռան լանջին գտնուում է մի աւե-

րակ վանք: Սա ամբողջովին շինուած է եղել տաշած կարմիր քարից, առանց սիւների. երկարութիւնն է 19,17 մետր (9 սոսժէն), իսկ լայնութիւնը՝ 7,81 մետր (3 ս. և 2 արշ.)։ միայն երեք պատը մնում են կիսաւեր և մի ուսմանական կամար, որ բոլորում է սեղանի վերև։

Սկեզեցու հարաւային պատին կից, որպէս մի առանձին շէնք, գտնուում է մի փոքրիկ, կամարակապ ձեղունով մատուռ, ուր նկատուում են երկու գերեզման։

Պատերի վրայ կան արձանագրութիւններ, բայց բոլորովին եղծուած են։ Վանքի հարաւային կողմից իջնում է մի ձորակ, որի միջոյ՛ հոսում է Կարմիր-վանքի ջուրը, որ թափւում է Սիսիանու գետի մէջ։ Իսկ սրա աջ ափին նկատելի է մի գիւղի աւերակ։

Աւանդութիւնն ասում է, թէ այս վանքը մի աղջիկ և մի եզ են շինել։ Եզը ինքնակամ քար է կրել, իսկ աղջիկը միայնակ շարել։

Սկեզեցու հանգէտ: բլրակը մօտ երկու հարիւր մետր երկարութեամբ ձգւում է լեզուակի ձևով և ապա իջնում մինչև Սիսիանու գետը։ Այս հարթութեան վրայ կայ մի փոքրիկ, գետնափոր, արհեստական այր, որի մէջ, ասում են, իբր թէ ճգնաւոր է թաղուած։ Աւխտաւորները մի նեղ անցքով ներս են կախւում և համբուրում այնտեղ թափթափուած քարերը։ Մի կանոնաւոր գերեզմանի տեղ չէ նկատւում։ Սրա մօտ կան գերեզմանաքարեր, որոնցից մէկի վրայ մի փոս է շինուած, յատկապէս նրա համար, որպէս զի անձրևի ջուրը այդտեղ հաւաքուի և թռչունները խմելով՝ ննջեցնալի հոգին մխիթարուի։

#### ՇԱՔԷՈՅ ՎԱՆՔ.

Շաքէոյ վանքը գտնուում է Շաքի գիւղում, որ ընկած է Անգեղակոթ և Ղարաքիլիսա գիւղերի մէջ, Շաքի-չայի աջ ափին, մի հարթութեան վրայ։ Այս գիւղի այժմեան բնակիչները մեծ մասամբ շիա թուրքեր և սիւննի օսմանցիներ են։ Վանքը 17,75 մետր (8 ս. 1 արշ.) երկարութիւն, 7,81

մետր (3 ս. և 2 արշ.) լայնութիւն և 12,78 մետր (6 սաժ.) բարձրութիւն ունի և շինուած է մեծ մասամբ տաշած քարից:

Պատերին կից ձգւում են չորսական կեղծ-սիւններ, որոնց վրայ նայնպէս պատերին կից բոլորում են ռոմանական կամարներ, որոնց մէջ կան մի-մի փոքրիկ պատուհան: Կամարների վրայ լանգում է ռոմանական ձեղունը, որ սեղանի մօտ արդէն փոքր ինչ քանգուել է:

Վանքը ունի մի դուռն, արևմտեան կողմում, որի վերև կայ մի նեղ և երկար պատուհան, իսկ սրա վերև, կտուրի վրայ կանգնեցրած է մի գեղեցիկ 2 մետրաչափ խաչարձան: Գուռն ճակատակալ քարի վրայ գրուած է.

Շարու եկեղեցիս շինեցինք թ. ՌՅԾ.

Եկեղեցու հանդիպակաց բլրակի վրայ կայ մի փոքրիկ խարխուլ մատուռ:

Եկեղեցու շուրջը թուրքերի տներ ու կալեր շինուած լինելով՝ չէ կարելի որոշել, թէ եղել են արգեօք խցեր և պարիսպ:

Այս գիւղում գտնուած է մի մեծ քարէ սարկոֆագ (շիրիմ), որ այժմ գործ են ածում որպէս ալիւրի շտեմարան:

Շ Ո Ւ Ք Ա Ր.

Ընկած է Արիւկլու գետի ձախ կողմը, մի հովտում: Գիւղի հարաւային և հիւսիսային կողմերում կան բարձր, կտրմիւր ժայռեր: Գիւղի մէջ կայ մի մեծ, տաշած քարից շինուած եկեղեցի, որի միայն մի խորանը և սեղանի պատն են մնացել կանգուն: Եկեղեցու մօտ կայ մի հին, հայկական գերեզմանատուն, որի տապանաքարերը թուրքերը տարել գործածել են:

Այժմեան բնակիչները շիա թուրքեր են, ընդամենը 35 տուն, 125 ար. 93 իգ., միասին 218 հոգի:

Վ Ա Ղ Ո Ւ Գ Ի.

Այս գիւղը գտնուում է Որոտնայ վանքի արևելահիւսի-

սալին կողմում, մի բարձրալանդակի վրայ, որ երեք կողմից պատած է բլուրներով: Արևելեան կողմից էլ ձգւում է մի խոր ձոր և բարձրանում մի մեծ լեռ, որի գագաթին հընումը մի ամրոց է եղել:

Գիւղում կայ մի բոլորովին ակերուած եկեղեցի և նրա մօտ՝ գերեզմաններ:

Այս գիւղը նախկին Վաղազինն է, Յովհան Որոտնեցու հայրենիքը: Այստեղ Սիւնեաց առաջին թագուհի Շահանդուխար Քս. 1000 թուականին շինել է պեղեցկայարմար և վայելչագիտակ Վաղազնի վանքը այն տեղում, ուր ըստ ականգութեան ս. Գ. Լուսաւորչից հիմնուած և Ստեփանոս անուն մի ճգնաւորից շինուած եկեղեցի է եղել, որ թունաւոր օձերից խայթուածներին բժշկելիս է եղել. «Ջհարեալսն ՚ի թունաւորաց և զսևացեալսն և զուռուցիկսն մերձ ՚ի պայթել՝ հանեն ՚ի բարձրալանդակ լերինսն և ցուցանեն զվանսն, և կամ սակաւ մի հող յեկեղեցւոյն հասուցանեն, փութապէս բժշկէ» \*):

Այժմ այդ միւսնոյն զօրութիւնը Որոտնայ վանքին են վերադարձում, ասելով, որ երբ օձը կծում է՝ անմիջապէս սկըսում է վազել դէպի Որոտնայ վանքը, և եթէ նա ակելի շուտ է կարողանում հասնել վանքին, քան խայթուածը՝ այն ժամանակ վերջինս չի բժշկուի, իսկ եթէ խայթուածը առաջ հասնէ և համբուրէ եկեղեցու դուռը՝ անմիջապէս կը բժշկուի:

Շահանդուխտ թագուհին թաղուած է եղել նոյն եկեղեցու դռան մօտ:

Վեց տարի յետոյ նոյն Շահանդուխտի և Վասակ թագաւորի որդի Սևադան ամեծածախ աշխատութեամբ շինում է մի եկեղեցի, այժմ պայծառ և գեղեցկայարմար, գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետի»:

Գիւղի այժմեան բնակիչները շիտ թուրքեր են: Ընդամենը 151 տուն, 738 ար. 558 իգական, միասին 1296 հոգի:

\*) Սխական, եր. 217:

## Ա Ղ Ո Ի Տ Ի.

Ուզի և Որոտնայ վանքի մէջ, Բարկուշատի ձորի ձախ  
լանջին ընկած է Աղուտի, նախկին Աղիտու գիւղը, ծած-  
կուած ծառերով: Գիւղի գրեթէ կենդրոնում գտնոււմ է մի  
եկեղեցու աւերակ, որի միայն սեղանի կամարը և սրա մօտ՝  
զանգակատան ճակատն է կանգուն մնացել: Այս մասը շատ  
գեղեցիկ է: 6,40 մետր (3 ս.) բարձրութեան երկու կեղծ  
և մի կլոր սիւների վրայ բոլորում են երկու գեղեցիկ ու-  
մանական կամարներ, իսկ սրանց վրայ՝ 2,13 (մի սաժ.)  
բարձրութեան երկու կեղծ և երկու իսկական գեղեցիկ սիւ-  
ներ են բարձրանում, միանալով միմեանց հետ գարձեալ  
աւանական կամարներով:

Սկեղեցու մօտ կայ գերեզմանատուն, ուր կան ՌՃ.  
թուականից տասպանաքարեր:

Գիւղի այժմեան բնակիչները շիա թուրքեր են, 159  
տուն. 647 ար. 515 իգ., ընդամենը՝ 1162 հոգի:

